

ՈՒՅԹԱՅԵԼ ԶԱՐԴԱՐԵԱՆ, «Դու եւ Ես».

Այս հասորի մէջ տեղ գտած արձակ քանակական առաջարկ է կազմակերպութիւնների մէծ մասը, ինչպէս վկայում է՝ հեղինակը, գրաւած են Կովկասում 1916 եւ 1917 թվին: Ուշագրաւ է, որ այդ օրերի յեղափախական ալեկոնուրի բաները համարեա թէ արձագանք չեն ունեցել հեղինակի յայգերի ու ապրումների վրա, եւ հասորի մէջ քացառութիւն են կազմում «Քաղաքացիական մոտիւմներին» նորած ժերթածները (LXXXI եւ այլն):

«Դու եւ Ես»-ի մէջ երկու տիրական յոյզ կայ՝ կիուզական սէրը եւ կորսած հօր կարօտը:

Սիրոյ յայգը արտայայտած է որպէս կուսական մի ապրում, մաքուր ու անքիծ մի տեսչ, որ յատուկ է պատահենական հոգիներին: Այդ այց սէրն է, որ երգել է Պ: Դուրեամը եւ նրանից տասնեակ տարիներ յետոյ՝ Վ: Տէրեամը: Այդ սէրը շիկնող արշալոյսն է իր ակնախտիս գոյներով եւ ոչ թէ երկնելում նառագայրող կրակ ու բոցը, որի մէջ մարմնի հետ միասն այրում է նաև հոգին:

Ես կը սիրեմ արշալո՞յսը որ կը բռնկի բնոներուն կատարէն, կը սիրեմ առաջնին ցնումները զարթնումի:

Ես կը սիրեմ քո արշալոյսը, իմ սիրու առաջնին սարսուներգ, սասումներդ անվարժ՝ գէտի անվերջ նոր երկնելներ:

«Առաջին սարսուներով» տրոփաւ սրտի սիրած էակն էլ մի «ամչկու աղջիկ է», «արտերում մէջ միմակ, երացին ժամացող մանկան պէս», որ փախչում է բանաստեծից եւ հեծ իր այդ փախուստով էլ սիրելի է նրա համար:

Կը սիրեմ թախիծը քո անծիր, համբոյը ու սիրոյ խօսքերը թովչական, որ ըստի:

Կը յիշեմ գիշերը լուսնկայ, թոթու վումն իմ դոզով, փախուստդ ամչկոտ աղջկայ:

Ու իմ քո՛յր, իմ քնքոյչ սրտակից, գուրզուրանքդ գաղտնի կյուղէ այնքան քաղցրորէն ինձ՝

Երբ յանկարծ կիշեմ քեզ այնպէս, արտերուն մէջ մինակ, երազիս ժպտացող մանկան պէս:

Երազային ու եքերային են նաև սիրային պահերն ու այն հանդիպումները սիրած էակի հետ, որ մկարագրաւած են այս ժերթածների մէջ: Մարմնական սիրով ու կրտով առողջուող էակներ չեն, որ հանդիպում են միմեանց, այլ կոյս հոգիներ, որոնց զգանեմները ձեռքը ձեռքի մէջ առնելուց այն կողմը չեն անցնում:

Ես երբ մի անգամ տղան տեսնում է աղջկայ սրումները՝ «քափացիկ մետաքսէ գուլպաներուն տակ քազմած» եւ նրա մէջ ցանկութիւն է առաջանում իր գողողոջում շրբներով համրութելու այդ սրումները, անմիշապէս մի ուրիշ զգացում ծառանում է դրա դէմ եւ արգելում «այսպիսի բան խորիթը», որով հետեւ գիտէ, որ այդ «ամօր է»:

Դպրոցական պատամիմերին յատուկ սիրոյ այս զգացումը փիզիքական ոչինչ սիրու իր մէջ: Նրանով համակած տը-նուին իր մէջ՝ նրանով համակած տը-նուին իր միայն իրշտակամման մի աղջիկ, իննել միայն իրշտակամման սիրոյ կորին չի դիպել մարմնական սիրոյ կորին ու դիպել: Խոկ երբ նա կին է դամում ու երբ, մանաւածդ, նա կրում է իր վրա փիզիքական սիրոյ արտայայտութիւնը, միայն եւ միայն հակակրամէ է յարուցանում բանաստեծի հոգում:

Տիկին

Դուք ամուսնացած էք:

Այնպէս այլակերպ է ձեր դէմքը հիմա եւ ձեր որովայնի ստեղծագործ կորութիւնը սակայն, շատ աններդաշնակ կստերագծի գեղեցիկ վերջալոյսի ֆօնին վրա պարտէզի:

• • • Ձեր գրեթէ ապշած նայւածքը, գեղակորոյս ձեր էութեան այս անտարբեր հետաքրքրութիւնը վերջին՝ ուղղած է դէպի ինձ:

Բայց բանաստեղծը խորչում է արդէն այդ կնոջց, որը «այնպէս փոխւած է» այժմ։ Զեան այլեւս առաջւայ ծաղիկները, «այրւել են թիթեռները լապտերի բոցէն» եւ շուշան աղջիկը դարձաք է ... «Հնչող մի դիակ»։

Այսպիսի մի մաքրամաքաւ սիրավ շուշանանման աղջկան սրբել կարելի է ոչ թէ մեծ քաղաքների սրբարաններում, այլ «քարձը ծառերու սուսերներուն տակ», «աստղերուն հետ», «անյայս լընակի ափին», «ընոնալանջի ծաղկաւէտ գերեզմանի» բոլ բասծ «հերառյը եղբերեւնինի» տերեւների սոսափիւմին ունկընդիր։ Եւ բնութեան նէրիւած բազմարիւ գեղեցիկ նկարագրութիւններ կան այս հասորի մէջ, որոնք վկայում են այն մասին, որ կնոջական սիրոյ կողմին բանաստեղծի հոգին իրակրող միւս տիրական յոյզին է բնութեան սէքը։

Գարո՞ւն, գարո՞ւն, գարո՞ւն։

Դլուխս կիյնայ ծաղիկներուն ու երազնին իր թեւերուն՝ ինձ կը տանի՛։

Կանաչագեղ հորիզոններն համբուրող սա կապոյտը քաղցրանհուն, ամպերու սա ցանցնաւած դողդոջ գնացքը դէպի հեռու անձանօթներն անդջական։

Յաւերժական վտակները գլուխն՝ ուսիներու սուսերափակի խորունէն, գգւանքը մեղմաշունչ հոլերուն, սոսաւիւնը երիտասարդ ճիւղերուն, թոփչքը փոքրիկ թեւերու՝ երկնակապոյտի մաքուր կամարէն։

• • Ինչպէ՞ս ըսել, ինչո՞ւ երգել, երբ լինչին ու դաշնաձայն, քաղցրա-

տարած եւ անտորը, մայր բնութիւնը կերպէ՛։

Բնորոշ է, որ նոյնիսկ բնութեան մէջ բանաստեղծը սիրում է նրա առաջին զարքօնքը՝ մքնաշաղը, արշալոյսը, զարումը եւ, առեասարակ, մեզմ պահերը։ Անարկու փոքրիկները, տակնու վրայութիւնն ու ալեկոծութիւնը չեն գրաւում նրան։

Գեղեցիկ են նաև այն ժերաւածները, որոնց մէջ արտայայտւած է բանաստեղծի կարօտը իր կարւած հօր համար։

Հայր, երբ պիտի գաս։

Կարօտդ ծովացաւ սրտիս մէջ, տես։
Հոգիս՝ տառապանքէն հողմալար՝
կուրծքիս տակ տերեւի պէս կը գողա։
Չպիտի՞ իյնա։

Այս կարօտը առանձնապէս ուժեղանում է, երբ գարնան գալով կենդանանում է բնութիւնը։ Բանաստեղծի «հոգին խելար» այդ ժամանակ քոչում է դէպի հայրը։ Նա հիացած է «քացւած ծաղկիներով», «կանաչ արտերով» ու «քենոյշ հովերով» եւ ուզում է, որ իր խնիգութիւնը կատարեալ լինի ու ներշնչում է իրեն այն սին հաւատը, թէ «այս առաւօտ, վերջապէս, գարունին հետ հայրիկու մեզի կուգայ»։ Եւ նրա երեւակայութիւնը ծրագրում է հանդիպման մանրամասնութիւնները։

Ես կը նեսե՞մ գանգուրներէս միւսները հրասարաւու, գէպի դալար դաշտերէն ու ոսկեծուփ արտերէն, մոռնաւուկ արցունքը քայլերուս տակ մեռնող ծաղիկներուն։

Ես քեզի՛ կուզամ, հայրիկ, մայիսեան երգով, զարնան թեւերով, փարելու փոշեթաթաւ ծունդերուդ եւ աչքերս, խենթութիւնով լիյուն աչքերս՝ նէրակա՞ կուրծքիւ վրա թաղելու։

«Դու եւ Ես»-ի բանաստեղծութիւնը յոյզերի եւ ոչ թէ խոհերի բանաստեղծութիւն է եւ այդ պատմառով էլ նրա արծէքը գերազանցապէս ձեւի եւ ոչ թէ խորքի մէջ զնոտուլու է։

Ա. Խ.